Հայտարարվում է մրցույթ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնի համար /պաշտոնի ծածկագիր 2.1-7/:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ունենալ.

ա/ բարձրագույն կրթություն, առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ աուդիտի ոլորտում, վերահսկողական ծառայությունների, պետական կամ համայնքային մասնագիտությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների անդամների /վերստուգողների/ առնվազն երեք տարվա փորձ կամ քաղաքական կամ հայեցողական պաշտոնների պաշտոնավարման /բացառությամբ խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և համայնքների ղեկավարների տեղակալների պաշտոնների/ , քաղաքացիական և պետական ծառայության այլ պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի համաձայն որակավորված աուդիտորների առնվազն վեց տարվա աշխատանքային փորձ

բ/ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Կրթության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>> <<Ներքին աուդիտի մասին>>, <<Աշխատակազմի կանոնադրության>> ՀՀ օրենքների և բաժնի պետի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտության իմացություն:

գ/ Համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու իմացություն

դ/ Ռուսերենի կամ մեկ այլ օտար լեզվի /կարդալու և բացատրվելու/ տիրապետում

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2014թվականի հոկտեմբերի 23-ը ներառյալ:

Մրցույթը կկայանա 2014 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 11^{00}-ին Գավառի քաղաքապետարանի N 8 սենյակում:

Փաստաթղթերի ներկայացման վայրը՝ Գավառի քաղաքապետարան, ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12 N 8սենյակ, հեռ.. 0264 2-76-69, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարան, 2-րդ հարկ, աշխատակազմի տարածքային կառավարման վարչություն, հեռ. 0264 2-23-32: